Արձանագրություն N 3

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար տավարի ականջների պիտակների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

10 փետրվարի 2022 թ.
ժամը 12:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարապետյանը, անդամներ՝ Մ. Խաչատրյանը, Մ. Ավագյանը, Լ. Սարգսյանը և քարտուղար՝ Վ. Նավասարդյանը:

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Գ. Մարգարյանը:

Օրակարգ

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մ. Կարապետյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ /eauction.armeps.am/ համակարգի միջոցով 2022 թվականի փետրվարի 08-ին ստացվել է պարզաբանման հարցում:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց պարզաբանել, մասնավորապես՝

Հարց - ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 59-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ կառավարության 2015 թ-ի 1315-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է. «5. Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալմանը ներկայացվող պահանջների բաղկացուցիչ մասերն են՝ 1) ականջապիտակները, որոնք պետք է պատրաստված լինեն ջերմակայուն պոլիմերային նյութից. «իգական» կցամասի երկարությունը՝ 60 մմ-ից մինչև 75 մմ, լայնությունը՝ 50 մմ-ից մինչև 65 մմ, իսկ «արական» կցամասի երկարությունը՝ 55 մմ-ից մինչև 65 մմ, լայնությունը՝ 50 մմ-ից մինչև 65 մմ, երկկողմանի ընթեռնելի նույնանման նիշերով պիտակներն ամրացվում են կենդանու ձախ և աջ ականջներին՝ նախատեսված հատուկ դակիչով>>: ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրով ի թիվս այլ պայմանների սահմանված են Ականջապիտակին ներկայացվող պահանջները. <<1) մեկ զույգ (մեկ հատ) ականջապիտակի «իգական» կցամասի երկարությունը՝ 65 մմ-ից մինչև 85 մմ, լայնությունը՝ 50 մմ-ից մինչև 65 մմ, իսկ «արական» կցամասի երկարությունը՝ 55 մմ-ից մինչև

75 մմ, լայնությունը՝ 50 մմ-ից մինչև 65 մմ»: Հարցադրում - Արդյոք գործադիրի սահմանած պարամետրերից շեղումը խնդրահարույց չէ և հետագայում չի խոչընդոտի պայմանագրի կնքմանը կամ կատարմանը կամ պատվիրատուն և հաղթող մասնակիցը հետագայում խնդիրներ չեն ունենա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հաշվեքննիչ պալատը և Պետական վերահսկողական ծառայությունը օժտված են կառավարության որոշումների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, իսկ վերջինս նաև գործարքները կասեցնելու լիազորություններով:

Պատասխան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացվել ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի «Կենդանիների **համարակալմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության** 2004 թվականի **հունվարի** 29-ի N **59-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**» N 1315-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը, որն ամփոփելուց հետո կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմին: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նախագիծը հրապարակվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք էջում /e-draft.am/:

- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2022 թ. փետրվարի 18-ին ժամը 12:00-ին, ՀՀ էկոնոմիկայի նախարարության վարչական շենքում, ՀՀ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5, 8-րդ հարկ, 809 սենյակ հասցեում:

<u>Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:</u>

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Մ. Կարապետյան

անդամներ _____ Մ. Խաչատրյան

_____ Գ. Մարգարյան

_____ Մ. Ավագյան

_____ Լ. Սարգսյան

քարտուղար _____ Վ. Նավասարդյան